ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

09.10.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ 770-Ա

2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՊՐՈՑԻ ԹԻՄԻ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 46-րդ հոդվածով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով 2025 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՀ Սյունիքի մարզպետի N 01/07/2/06869-2025 գրությունը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ապահովել 2025 թվականի հոկտեմբերի 10-ին ժամը 10:00-ին Կապանի թիվ 5 հիմնական դպրոցում անցկացվող 2025 թվականին անցկացվող նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի» համայնքայի փուլին առաջին տեղ գրաված Ակների միջնակարգ դպրոցի թիմի՝ թվով 9 աշակերտի և 2 ներկայացուցչի ուղևորափոխադրումը՝ Գորիս- Կապան և հետադարձ ուղղությամբ:
2. Գորիսի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Ա. ԱՂԱՋԱՆՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 09
ք. Գորիս